

Օրինակելի ձև

Հաստատված է

ՀԲԿ---ՇՀԱՊԶԲ—16 / 007 ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի
2015 թ. <<դեկտեմբեր>> <<16>>-ի թիվ <<1>> որոշմամբ

<<ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

<<ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ>>-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ <<ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՅՈՒԹԵՐ
և ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ >> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<<ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ -Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ << ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՅՈՒԹԵՐ և ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ >> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՈՒՅՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-11

<<ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ -ն (այսուհետև՝ Պատվիրատու)՝ << ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՅՈՒԹԵՐ և ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ >> ձեռքբերման նպատակով կազմակերպել է <<ՀԲԿ--ՇՀԱՊՁԲ--16/007>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետև՝ ընթացակարգ) և տրամադրում է սույն հրավերը:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցները:

Սույն ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել **Ք.Հրազդան, Մ. Բաղրամյան պող. Պուրակային 32 հասցեով**, փաստաթղթային ձևով մինչև սույն հրավերը հրապարակվելու Օրվան հաջորդող << 7 >> -րդ աշխատանքային օրվա օրվա ժամը << 15:00 >>-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին սույն հրավերի հրապարակման օրվանից մինչև՝ <<**25 դեկտեմբերի** >> ժամը << **15 :00>>-ը**: Ընդ որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար Պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար (կամ---- ՀՀ դրամը վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը դիմումի հետ միասին ներկայացնելու դեպքում¹) այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը: (Վճարումն անհրաժեշտ է իրականացնել-----հաշվեհամարին²):

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում Պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<<Հրազդանի Բժշկական Կենտրոն>>ՓԲԸ Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<hrazdanibk@mail.ru>>,

հեռախոսահամարն է՝ <<077-44-81-41>>:

¹ Փակագծերով նշված արտահայտությունը հանվում է, եթե հրավերի տրամադրման համար վճար չի նախատեսվում, հակառակ դեպքում՝ նախադասությունը հանվում է <<անվճար>> բառը:

² Փակագծերով նշված նախադասությունը հանվում է, եթե հրավերի տրամադրման համար վճար չի նախատեսվում:

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում <<ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ >>ՓԲԸ-ի կարիքների համար՝
<< ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՅՔԱՆՈՒԹԵՐ և ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ >> ձեռքբերումը, որոնք
խմբավորված են <<176>> չափաբաժինների՝

Չափաբաժին ների համարները	Չափաբաժնի անվանումը
1.	Լվացքի Փոշի Ավտոմատ Բաղադրությունը՝ մինչև 5% պոլիկարբոքսիլներ պարունակող կատրիոնային արտաքին ակտիվ նյութերից /ԱԱՆ/ 5-15% թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30% անիոնային ԱԱՆ , ֆոսֆատներ , էնզիմներ , օպտիկական սպիտակեցնող նյութերից : Հոտը ըստ կիրառված հոտավորիչի 3կգ-5կգ –ոց տուփերով
2.	Լվացքի Փոշի Ոչ Ավտոմատ Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի , փոշու զանգվածային մասը ոչ ավել 5%օՐH–ը 7.5-11.5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22% փրփրագոյացման ունակությունը / ցածրփրփրագոյացնող միջոցների համար / ոչ ավելի 200մմ , փրփուրի՝ կայունությունը ոչ ավելի 0.3միավոր , լվացող ունակությունը ոչ պակաս 85 % , ԳՕՍՍ 25644-96: անվտանգությունը , մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-Ն1795-Ն որոշմամբ հաստատված „Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի „ համաձայն 450 գ-ոց տուփերով
3.	Ժավել ACC ավտոմատ կամ համարժեք 1լ-ոց ործարանային տարաներով
4.	Ժավելի սպիրտ Սպիրտ, 120% 1լ-ոցԳործարանային տարաներով
5.	Լողակ Փոշի փաթեթ 5 0 գ-ոց
6.	Լուգա Պլաստիկ խտանյութ 0.5-ոց տարա
7.	Աման լվանալու հեղուկ Frosh, FairyԿամ համարժեք0.5լ
8.	Անձեռոցիկ ԲամբակյաՄիկրոֆիբրա , որակյալ35/ 45 սմ
9.	Աղբարկղ Կափարիչով Պլաստմասսայից, 10 խոր դմ տարողությամբ
10.	Ավել Սենյակի հատակը մաքրելու համար , բնական, տեղական արտադրության , քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90) սմ, ավտղ մասի լայնքը(35-40)սմ
11.	Ավել աղբթափիչ Պոչը մետաղաԹափիչը պլաստմասսայե
12.	Աղբը հավաքելու համար, ձողով ավելով ՀՍՍ 124-2007 կամ համարժեք, Տարողունակ գոգաթիակ, 32x39 սմ. + ավել 124 սմ
12.	Բաժակ միանվագ օգտագործմանհաստությունը 0.9 մմ որակյալ
13.	Գուպկա Աման լվանալու Ուղղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսպատված արհեստական կտորով
14.	Դույլ պլաստմասսայից կափարիչով 5լ տարողության, ՀՍՍ-124-2007, անվտանգությունը , մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2005թ. 25/05 Ն679-Նորոշմամբ հաստատված սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխ. Կանոնակարգին.
15.	Դույլ պլաստմասսայից կափարիչով 10լ տարողության, ՀՍՍ-124-2007, անվտանգությունը , մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2005թ. 25/05 Ն679-Նորոշմամբ հաստատված սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխ. Կանոնակարգին.
16.	Դույլ. Ոչ սննդային պլաստ. Կափարիչով10լ
17.	Դույլ. Ոչ սննդային պլաստ.կափարիչով 7լ
18.	Դույլ. Ոչ սննդային Պլաստ.կափարիչով 5լ
19.	Զուգարանի Թուղթ Ռուլոնով , երկշերտ կամ եռաշերտ , 9.8x12.5սմ , 150 թերթիկ, երկարությունը 18.75 մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից , թույլատրված սանհիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. 19/10 Ն1546-Ն որոշման կանոնակարգի
20.	Թեյնիկ Էլեկտրական Մեկ տարվա երաշխիք 1.5լ
21.	Թաս պլաստմասայից Ոչ սննդային 10լ
22.	Թաս պլաստմասայից Ոչ սննդային 5լ
23.	Թաս պլաստմասայից Ոչ սննդային 8լ
24.	Խոզանակ Երկարացվող Պոչով, հատակի Քամիչով գուպկայով Մաքրող մասի լայնությունը 50-60 սմ
25.	Խոզանակ Զուգարանի Տակդիրով, նիկելապատ
26.	Կրուշկա Պլաստմասսայից Չափանշված, սննդի հետ շփվող 2լ
27.	Կալցոն 28 գ հաբեր
28.	Հեղուկ զուգարան լվանալու 1 Լ-ոց, YPLON, կամ համարժեք
29.	Հատակի շոր 80/120 սմ 4 կողքերը կարած
30.	Հեղուկ Հատակ լվանալու/ սպիկի/1 Լ-ոցBagi, emsal Կամ համարժեք
31.	Հեղուկ Պատուհան լվանալուՀեղուկ սփրեյ, 0.5 Լ տարաներով

32.	Ձեռնոց Պոլիէթիլենային Ոչ միանգամյա օգտագործման/LogixԿամ համարժեք4-5 մմ հաստությամբ, որակյալ
33.	Մաքրող փոշի Տարաները թղթաԿափարիչը երկաթյաSorti, cometԿամ համարժեք 0.5կգ-ոց
34.	Սրբիչ Թղթյա միանվագԵրկշերտանի ռուլոնով 100% ցելուլյոզա 25-26 սմ լայնությամբ
35.	Սառնարանի աման Պլաստմասսայիցուղղանկյունաձև, թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով 2լ
36.	Սառնարանի աման Պլաստմասսայից ուղղանկյունաձև, , թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով 3 լ
37.	Սառնարանի աման Պլաստմասսայից ուղղանկյունաձև, թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով 10 լ
38.	Սառնարանի աման Պլաստմասսայիցուղղանկյունաձև, թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով4 լ
39.	Տարա պլաստմասսայից սննդային կափարիչով 5լ. Թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով
40.	Տարա պլաստմասսայից սննդային կափարիչով 8լ թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով
41.	Տարա պլաստմասսայիցսննդային կափարիչով 12լ թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով
42.	Տարա պլաստմասսայիցսննդային կափարիչով 15լ թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով
43.	Տարա Սննդային Ջրի, չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով40լ
44.	Տարա Ջրի չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով 50լ
45.	Տարա Սննդային Ջրի չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով60լ
46.	Տարա Ջրի չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով70լ
47.	Տոպրակ աղբի Աղբի պոլիէթիլենային սև կամ գունավոր30լ20 հատանոց փաթեթով
48.	Տոպրակ աղբի Աղբի պոլիէթիլենային սև կամ գունավոր 120լ 10 հատանոց փաթեթով
49.	Տոպրակ ԴեղորայքիՄիանվագՊոլիէթիլենայինժշկական տարբերանշանով1 լ
50.	Տազիկ Պլաստմասսայից10լ
51.	Տազիկ Պլաստմասսայից20լ
52.	Տազիկ Պլաստմասսայից30լ
53.	Ցանց Լվացքի 50 լ-ոց
54.	Ցանց Դեղորայքի30 լ կափարիչով
55.	Ցելոֆան ՊոլիէթիլենԵրկշերտ , բարձր թափանցիկությամբ
56.	Փայտ հատակի Հատակ լվանալու1.5-2 մ երկարության փայտե կամ պլաստմասսայե լաքապատված
57.	Էսենցիա Սննդի Էսենցիա,220-250 գր տարաներով
58.	Օճառ ՁեռքիՀեղուկElvi կամ համարժեք 0.4 կգ տարայով
59.	Օճառ ՁեռքիՉորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը/ ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 կտորի անվանական զանգվածի համար/ ոչ պակաս ,, Չեզոք,, և ,,Էքստրա,, տեսակների համար 78գ.,Մանկական ,, և ,, Սովորական ,, տեսակների համար 74գ , սողայանյութերի զանգվածային / վերահաշվարկված ըստ Na2O/ մասը ոչ ավելի ,, Չեզոք,, տեսակի համար բացակայում է ,,Էքստրա տեսակի համար 0.2 %, ,,Մանկական ,, տեսակի համար ,, Սովորական ,, տեսակի համար 0.22օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը / տիտրը 36-41 C/ նատրիումի քլորիդի զանգվածային մասը 0.4%-ից ոչ ավելի , անվտանգությունը ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N1109-Ն հրամանով հաստատված ,, N2—111-8-2 օժանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ ,, սանիտարական կանոնների և նորմերի , մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍՏ 25546-2002 %, 0.15%100գր
60.	Լվացարան 50/40Կերամիկա Ուռքով
61.	Խողովակ պլաստմասսայից Ф50 2մ
62.	Խողովակ պլաստմասսայից Ф100 3մ
63.	Ճկուն խողովակ Մառը ջրի 40սմ
64.	Ճկուն խողովակ Տաք ջրի40սմ
65.	Խողովակ մետաղապլաստ20
66.	Խողովակ մետաղապլաստ25
67.	Ջեռուցման մարտկոցի անկյունային փական/եվրոպական արտադրության կամ համարժեք/20/20
68.	Կորոբ մմ 12*12
69.	Փական ջրի Պտուտակով Ф50մմ
70.	Կորոբ մմ 15*15
71.	Կորոբ մմ 20*15
72.	Հայելի Ամրացնելու հարմարանքով Շրջանակով 50/7
73.	Մեկուսիչ ծալալեն
74.	Նստակոնք /եվրոպական կամ համարժեք/
75.	Ջեռուցման մարտկոց /եվրոպական կամ համարժեք/16լ18 քառ մ
76.	Ջեռուցման մարտկոց կոմպ./եվրոպական կամ համարժեք/4 կախիչ 4 խցան, 1 օդահանիչ
77.	Ջերմաչափ սենյակի
78.	Ջրի պապլավոկ , պլաստմասսայից կողքից/եվրոպական կամ համարժեք/2000լ տարողության համար
79.	Ջրի ծորակ Տաք և սառը / 1 թևանի 1 թաթիկով /Տարբեր չափերի, խառնիչային տիպի, ըստ ԳՕՍՏ 25809-96 , արտասահմանյան
80.	Միլիկոն 280մլ
81.	Բաղնիքի սմիսիտել տաք և սառը ցուղով/եվրոպական արտադրության կամ համարժեք/2 փականով
82.	Վինտիլ ջրի 20/20պտույտ
83.	Փական մարտկոցի
84.	Միջուկ փականի/եվրոպական արտադրության կամ համարժեք/8մմ

85.	Օդանցքի ցանց 300x300 մմ
86.	Մետաղապլաստ պատուհանի բռնակ
87.	Աստիճան ալյումինից 3մ Ալյումինե խողովակից, անկյունակից և ալյումինե թիթեղից
88.	Ճկուն խողովակ/ սիֆոն/ Կոյուղու
89.	Ճկուն խողովակԹթվածնի բարձր ճնշմանհամար60-70 սմ200-250 ճնշում
90.	ՍոսինձMAF KP 705400մգ
91.	Ջրի գտիչ25/252 լիտր
92.	Ջրամղիչ220-230վ2900 պտույտ4-5-40 լ/րոպե38մ բարձրության0.37 կվտ
93.	Ջրամղիչ220-230վ2900 պտույտ120 լ/րոպե52մ բարձրության1.6 կվտ
94.	Բռնակ ալյումինի դռան/ եվրոպական արտադրության կամ համարժեք/
95.	Փական ալյումինի դռանKALE5/18 սմ
96.	Փականի բռնակ BEBTOLLIAF 106-L96 ABB
97.	Ալյումինե դռան փական /զաշուկա /
98.	Մետաղապլաստե դռների պետլի
99.	Աղբարկղ ցինկապատ80x25 Աղբարկղը բաղկացած է 2 մասից, արտաքին ձևավոր թիթեղից և ներքին թիթեղյա արկղից : Աղբարկղի արտաքին մասի թիթեղների հաստությունը ` 0.6 մմ ներքին արկղի հաստությունը 0.5մմ : Աղբարկղի արտաքին մասի գույնը ծագանակագույն, իսկ կափարիչը և ներքին արկղը` սև: կափարիչը արտաքին մասին ամրանում է 2 մետաղյա օղակներով , իսկ ներքին արկղի վրա նախատեսվում է մետաղալարից բռնակ:
100.	Խոհանոցի լվացարան պահարանով 2 տեղանոց
101.	Դռան շվեցար15 կգ-ոց
102.	Նստակոնքի կափարիչ կաշվից
103.	Նստակոնքի բաշոկի ակսեսուար Նովա
104.	Պլիտա էլեկտրական / եվրոպական կամ համարժեք/ Քարով2 տեղանոց1 տարվա երաշխիք
105.	Պլիտա էլեկտրական / եվրոպական կամ համարժեք/ Քարով1 տեղանոց1 տարվա երաշխիք
106.	Կաթսա էմալապատ5լ
107.	Կաթսա էմալապատ7լ
108.	Կաթսա էմալապատ3լ
109.	Արդուկ 2 կգ-ոց 1 տարվա երաշխիք
110.	Օճառ լվացքի սև
111.	Աղ կերակրի
112.	Սոդա կերակրի
113.	ԷլեկտրականԱպահովիչ250 Ամիաֆազ հախճապակե Հալուն ապահովիչ անվանական հոսանքը 250 Ա փոփոխական հոսանքի , լարումը 380 Վ, ըստ Գոստ 17242-86 կամ համարժեք / ՊՆ 2 / նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի պաշտպանության համար : Անվտանգությունը` ըստ ՀՀ կառավարության 2005 թ փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին և ԳՕՍՏ 12.2.007.6-75, ԳՕՍՏ 12.1.019-2009. Գոստ 12.1.030.-81, ԳՕՍՏ 12.3.019-80
114.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/25A Միաֆազ /LEGRAND/
115.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/32AԵռաֆազ/LEGRAND/
116.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/40A Եռաֆազ/LEGRAND/
117.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/63A Եռաֆազ/LEGRAND/
118.	Վիլկա էլեկտրական/եվրոպական արտադրության կամ համարժեք/ Հողանցման /MAKEL/
119.	Վիլկա էլեկտրական/եվրոպական արտադրության կամ համարժեք/ Առանց հողանցման /MAKEL/
120.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/100A Եռաֆազ/LEGRAND/
121.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/25A Եռաֆազ/LEGRAND/
122.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/50A Միաֆազ/LEGRAND/
123.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/32A Միաֆազ/LEGRAND/
124.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/63A Միաֆազ/LEGRAND/
125.	Լյումինեցենտային լամպերի ստարտյորներ
126.	Էլեկտրական լամպ 100w
127.	Էլեկտրական լար Պղնձե PPV2*1.5
128.	Էլեկտրական լար Պղնձե PPV3*1.5
129.	Էլեկտրական լար Պղնձե PPV2*2.5
130.	Էլեկտրական լար Պղնձե PPV3*2.5
131.	Էլեկտրական ֆազի հսկող ռելե Եռաֆազ
132.	Հաղորդալար Պղնձե , ցածր լարմանKSPV 4*025
133.	Հաղորդալար ՄՄՓ
134.	Էլեմենտ CR20323V
135.	Էլեոնոմ լամպ /եվրոպական կամ համարժեք/Խողովակաձև լյումինեցենտային լամպ` ուղիղ , օղակաձև կամ Ս –ձև G-13 տիպի լամպակոթով , 20, 25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , համապատասխան երկարությամբ , ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը` ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների , տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99 Phillips, xamelion, torsh 18w
136.	Էլեոնոմ լամպ /եվրոպական կամ համարժեք 26wԽողովակաձև լյումինեցենտային լամպ` ուղիղ , օղակաձև կամ Ս –ձև G-13 տիպի լամպակոթով , 20, 25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50

	Հց հաճախականության , համապատասխան երկարությամբ , ԳՕՍտ 6825-91: Անվտանգությունը ՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ,, Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների ,, տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99 Fillips, xamelion, torsh
137.	Էկոնոմ լամպ /եվրոպական կամ համարժեք/ 11w Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ , օղակաձև կա Ս –ձև G-13 տիպի լամպակոթով , 20, 25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , համապատասխան երկարությամբ , ԳՕՍտ 6825-91: Անվտանգությունը ՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ,, Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների ,, տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99 Fillips, xamelion, torsh
138.	Ինքնաձիգ41429
139.	Լամպ100w Էլոկտրական լամպ / 220-230/ Վ լարման, 50 Հց հաճախականության , 100 Վտ հզորությամբ , թափանցիկ , տանձաձև կամ սնկաձև , կոթառը E27/27 տիպի , ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը ՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին
140.	ԼամպTL-D18w60սմ Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ Ս –ձև G-13 տիպի լամպակոթով , 20,25 և 40 Վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , 60 սմ երկարությամբ , ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը ՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի ՝ և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99 Fillips
141.	ԼամպTL-D36w 120 սմ Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ Ս –ձև G-13 տիպի լամպակոթով , 20,25 և 40 Վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , 60 սմ երկարությամբ , ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը ՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի ՝ և ԳՕՍՏ Ռ ՄԷԿ 61195-99 Fillips
142.	Լամպ 60w E27 R63 Fillips
143.	Լամպ DNAT-150 W
144.	Լամպ 60 w Էլոկտրական լամպ / 220-230/ Վ լարման, 50 Հց հաճախականության , 100 Վտ հզորությամբ , թափանցիկ , տանձաձև կամ սնկաձև , կոթառը E27/27 տիպի , ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը ՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին
145.	Գեյզեր Ջրատաքացուցիչ,Էլեկտրատաքացուցիչ կենցաղային 9 կվտ JEMSAN
146.	Լուսամփոփ2*36wTINKO
147.	Լուսամփոփ2*18wTINKO
148.	Լյումինեսցենտային լամպերի դրոսեկներ
149.	Մեկուսիչ ժապավեն օղակաձև
150.	Լուսամփոփ1*18wTINKO
151.	Լուսամփոփ4*18w
152.	Անջատիչ 1 տեղանոց MAKEL
153.	Անջատիչ 2 տեղանոց MAKEL
154.	Վարդակ Հողանցումով 1 տեղանոց MAKEL
155.	Վարդակ Հողանցումով 2 տեղանոց MAKEL
156.	Վարդակ Հողանցումով 4 տեղանոց Առանց լարի MAKEL
157.	Վարդակ Հողանցումով 6 տեղանոց Առանց լարի MAKEL
158.	Վարդակ 3 տեղանոց Առանց լարի MAKEL
159.	Վարդակ 4 տեղանոց Առանց լարի MAKEL
160.	Վարդակ Հեռախոսի MAKEL
161.	Էլ. Ձողիչ 220վ 40 վտ
162.	Էլ. Ձողիչ 220վ 25 վտ
163.	Պերֆերատորի սվերլո16/60 մմ CDC պլյուս
164.	Պերֆերատորի սվերլո 12/400 մմ CDC պլյուս
165.	Պերֆերատորի սվերլո 5/60 մմ CDC պլյուս
166.	Պերֆերատորի սվերլո 8/60 մմ CDC պլյուս
167.	NZY400 վտ DNAT լամպերի համար
168.	Դրոսեկ 250 վտ DNAT լամպերի համար
169.	Դյուրեկ շուռուպ Մեխովի6մմ-40մմ
170.	Կուսաչկի/կծաքցան/ Մինչև1000վ
171.	Հարթաշուրթ Մինչև 1000վ
172.	Պտուտահան Մինչև 1000վ
173.	Բալզարկա / փոքր/
174.	Փռչեկով 1800- 2000վտ,
175.	Քամիչ իր տակդիրով , պոչով, 6-7 Լ

<< **ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՑՈՒԹԵՐ և ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ** >> տեխնիկական բնութագրերը,

ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՔՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉՍՓԱՆԺՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ <<Մասնակցության իրավունքը>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով Մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե Մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ Մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական փորձառություն,
- 2) տեխնիկական միջոցներ,
- 3) ֆինանսական միջոցներ,
- 4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ է համարվում **ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՑՈՒԹԵՐ և ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ** մատակարարումը³:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը⁴:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Տեխնիկական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.4) այն մասին, որ հայտը ներկայացվելու նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

³ Եթե գ ն մ ա ն առ ար կ ա յ ի ն մ ա ն ա տ ի պ խ մ բ ի ն ա խ ա հ ա շ վ ա յ ի ն գ ի ն ը գ ն ու մ ն եր ի պ լ ա ն ի լ ը ա գ մ ա ն կ ար գ ի հ ա մ ա ժ ա յ ն չ ի գ եր ա գ ա ն ց ու մ գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի հ ն գ ա պ ա տ ի կ ը , ա պ ա ս ու լ յ ն կ ե տը հ իր ա վ եր ի ծ հ ա ն վ ու մ է :

⁴ Եթե գ ն մ ա ն առ ար կ ա յ ի ն մ ա ն ա տ ի պ խ մ բ ի ն ա խ ա հ ա շ վ ա յ ի ն գ ի ն ը գ ն ու մ ն եր ի պ լ ա ն ի լ ը ա գ մ ա ն կ ար գ ի հ ա մ ա ժ ա յ ն չ ի գ եր ա գ ա ն ց ու մ գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի հ ն գ ա պ ա տ ի կ ը , ա պ ա ս ու լ յ ն կ ե տը հ իր ա վ եր ի ծ հ ա ն վ ու մ է :

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.5) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.⁵

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.6) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող <<7>>րդ աշխատանքային օրվա ժամը <<15 :00 >>-ն, <<Ք.Հրազդան , Մ.Բաղրամյան պող. Պուրակային 32 >> հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար <<Լարիսա Վոլոդյայի Նավասարդյան >>: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

դ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

է. իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ⁶:

ը. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրը իրականացվելու է գործակալության միջոցով.

⁵ Եթե գ ն մ ա ն առ ար կ ա յ ի ն մ ա ն ա տ ի պ խ մ բ ի ն ա խ ա հ ա շ վ ա յ ի ն գ ի ն ը գ ն ու մ ն եր ի պ լ ա ն ի
լ ը ա գ մ ա ն կ ար գ ի հ ա մ ա ժ ա յ ն չ ի գ եր ա գ ա ն ց ու մ գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի
հ ն գ ա պ ա տ ի կ ը , ա պ ա ս ու լ յ ն պ ար բ եր ու թ յ ա ն 1-ի ն և 2-ր դ կ ե տ ե ը ը հ իր ա վ եր ի ց հ ա ն վ ու մ ե ն :

⁶ Մ ա ս ն ա կ ի ց ը ս ու լ յ ն կ ե տ ով ն ա խ ա տ ե ս վ ա ժ հ ա յ տ ար ա թ ու թ յ ու ն ը հ ա յ տ ով
ն եր կ ա յ ա գ ն ու մ է , ե թ ե առ ա ջ ար կ ու մ մ մ ա տ ա կ ար ար ել Ե վր ա ս ի ա կ ա ն տն տե ս ա կ ա ն
մ ի ու թ յ ա ն ա ն դ ա մ եր կ ը ն եր ի ար տ ա դ ը ու թ յ ա ն ա պր ա ն ք :

թ. համատեղ գործունեության պայմանագիրը, եթե Մասնակիցը գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու>> կարգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ ծանուցվելու օրվան հաջորդող <<7>>-րդ աշխատանքային օրվա ժամը <<15 : 00>>-ին, <<Ք.Հրազդան, Մ. Բաղրամյան պող , Պուրակային 32 >> հասցեում:

7.2 Հայտերի բացման նիստում՝

1) նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն է հաղորդում գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին է փոխանցում հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները.

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս Մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե Մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝

ա. գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

բ. գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն⁷: Իսկ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7.2.4 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքով:

7.2.5 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ Մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ Մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.6 Էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

7.2.7 Պահանջի դեպքում Մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած Մասնակցին:

7.3 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

7.4 Եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

7.5 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

2) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

3) ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

7.5.1 Պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը:

7.5.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

⁷ Եթե գ ն մ ա ն հ ա յ տ ո Վ ն եր կ ա յ ա ճ Վ ա ծ տ Վ յ ա լ գ ն մ ա ն առ ար կ ա յ ի պ ա հ ա ն ջ Վ ող ք ա ն ա կ ի և առ ավ ե լ ա գ ու յ ն գ ն ի ար տ աղ դ յ ա լ ը գ եր ա գ ա ն ց ու մ է գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի 70-ապ ա ղ կ ը ը, ապա ս ու յ ն ե ն թ ա կ ե տ ը հ ըր ա վ եր ի ց հ ա ն վ ու մ է: Ը ն դ ո թ ու մ, գ ն մ ա ն ը ն թ ա գ ա կ ար գ ը չ ա փ ա բ ա ժ ի ն ն եր ո Վ կ ա գ մ ա կ եր ա վ ե լ ու ո լ դ ե պ թ ու մ գ ն մ ա ն առ ար կ ա յ ի պ ա հ ա ն ջ Վ ող ք ա ն ա կ ի և առ ավ ե լ ա գ ու յ ն գ ն ի ար տ աղ դ յ ա լ ը հ ա շ վ ար կ Վ ու մ է ը ս տ չ ա փ ա բ ա ժ ի ն ն եր ի :

3) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը սույն հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը համարվում է հարկային գաղտնիք, բացառությամբ Մասնակցի կողմից կամ նրա համաձայնությամբ հրապարակված տեղեկությունների:

7.7 Սույն հրավերի 7.5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանությունն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

7.8 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

8.1 Սույն հրավերի 7.7 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

8.1.1 հանձնաժողովը գնահատում է սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

8.1.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

8.1.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին⁸:

8.1.5 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում են սույն հրավերով նախատեսված պայմանները:

Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հրավերի 7.7 կետի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հրավերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

⁸ Եթե գ ն մ ա ն առարկայ ի ն մ ա ն ա տ ի պ ի մ բ ի ն ա խ ա հ ա շ վ ա յ ի ն գ ի ն ը գ ն ու մ ն եր ի պլ ա ն ի լ ը ա գ մ ա ն կ ա ը գ ի հ ա մ ա ծ ա յ ն չ ի գ եր ա գ ա ն գ ու մ գ ն ու մ ն եր ի բ ա գ ա յ ի ն մ ի ա վ ո թ ի հ ն գ ա պ ա տ ա կ ը և հ թ ա վ եր ո վ <<տե խ ն ի կ ա կ ա ն մ ի ժ ո ն գ ն եր >> կ ա մ <<ա ժ խ ա տ ա ն ք ա յ ի ն ռ ե ս ու լ ը ս ս ն եր >> ո թ ա կ ա վ ո թ մ ա ն չ ա փ ա ն ի շ ն եր ի մ ա ս ո վ ս ա հ մ ա ն վ ա ծ չ ե ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն պ ա հ ա ն ջ ն եր , ա պ ա ս ու յ ն բ ա ժ ն ի 8.1.1-8.1.3 կ ե տ եր ը հ թ ա վ եր ի գ հ ա ն վ ու մ ե ն :

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում << 5 >> օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե

հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

